Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Փյունիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հանրահաշիվ (3 դասաժամ) ,տեխնոլոգիա (3 դասաժամ),երկրաչափություն (2 դասաժամ) , հայոց լեզու(20 դասաժամ) , գրականություն (10 դասաժամ) ,տարրական դասարանների առարկաների (17 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝ -

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3.անձը հաստատող փաստաթուղթ,

4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

5.ինքնակենսագրություն (Ձև 5),

6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են **սեպտեմբերի 6-ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ ժամը 10:00-ից 15:00-ը , ամեն օր բացի շաբաթ, կիրակի եվ այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 22-ին ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկի միջնակարգ դպրոցում**:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 37-87-55 հեռախոսահամարով: